Կ. Պոլսից մեզ գրում են. Բարձրապատիւ Մեծ Եպարքոսն յունուարի 9ին իւր մօտն է հրաւիրել ազգային մեծամեծներից վսեմապատիւ Տատեան, Վահան, Սերվիչէն և և Նուրեան էֆէնտիներին և նոցա հետ յանուն Վեհափառ Սուլթանին ազգային գործերի վրայ խորհրդակցել է։ Իսկ Յունուարի 16 ին էլ Սրբազան Պատրիարքի հետ մի կարեւոր տեսակցութիւն է ունեցել։

## ԿԱՐՍԻ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒԸ. Ի 22ԷՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1885 ԱՄԻ ՄԻՆՉ ց15-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1887 ԱՄԻ.

### ՄՈՒՏՔ.

| | | |
|---|---|---|
| 1. 1885 ամի Սեպտեմբերի 22 ին նախկին երեցփոխաններից ստացուած է $7^{1}/_{2}$ գրվ. մոմ . . . . . . | 34 | 40 |
| 2. Եկեղեցուց դուրս մասնաւոր անձանց վաճառուած է $26^{3}/_{4}$ գրվ. մոմ . . . . . . . . | 26 | 85 |
| 3. Եկեղեցւոյ մէջ վաճառուած է 5 փութ. 23 գրվ. մոմ . . | 732 | 97 |
| 4. Երկու հարիւր ինըսուն եւ վեց մկրտութիւնից լուսադին . . | 178 | 20 |
| 5. Քառասուն եւ ինն պսակից լուսադին . . . . | 57 | 10 |
| 6. Ննջեցեալներից լուսադին . . . . . . | 10 | 50 |
| 7. Եկեղեցւոյ գանձանակից գոյացել է արդիւնք . . . | 13 | 18 |
| 8. Եկեղեցապատկան տներից վարձ ստացուած է . . . | 20 | |
| 9. Եկեղեցւոյ վերանորոգութեան համար զանազան անձինքներից նուէր ստացուած է . . . . . . | 145 | |
| Բոլոր մտից գումարն է. | 1218 | 20 |

### ԾԱԽՔ.

| | | |
|---|---|---|
| 1. Եկեղեցւոյ ժամկոչին, լուսարարին, տիրացուին տրուած է ռոճիկ | 478 | 50 |
| 2. Եկեղեցւոյ համար առնուած զարդերի եւ իրեղէնների վճարուած է . . . . . . . . | 58 | 29 |
| 3. Եկեղեցւոյ եւ եկեղեցապատկան շին. վրայ զանազան ծախքեր է եղել . . . . . . . . | 58 | 29 |
| 4. Առնուած է եկեղեցւոյ համար 6 փութ եւ 7 գրվ. մոմ . | 129 | 10 |
| 5. Եկեղեցւոյ մէջ ձրի վառելու համար տրուած է $4^{1}/_{2}$ գրվ. մոմ. | » | » |
| Բոլոր ծախուց գումարն է | 724 | 18 |
| Մտից գումարից ծախուց գումարը դուրս գալով մնում է պատրաստի փող ընդ ամենը . . . . | 494 | 2 |

Մնացած գումարից Հոգեւոր իշխանութեան տնօրինութեան համաձայն 400 րուբլին յանձնուած է Կարսի Հայոց եկեղեցական դպրոցների Հոգաբարձութեան, որպէս նպաստ յիշեալ դպրոցների 1886—1887 ուսումնական տարւոյ։

Իսկ մնացեալ 94 ր. 2 կ. եկեղեցապատկան բոլոր կահ կարասիքների, պաշտօնական մատեանների եւ այլ զանազան կարեւոր պաշտօնական թղթերի հետ յանձնեցի պ. պ. Հաշուետեսներ Սարգիս Աստոյեանցին եւ Խաչատուր Մախաթչեանին, որոնք Հոգեւոր կառավարութեան հրամանագրութեան համաձայն, ինձ

հետ մանրամասնութեամբ հաշիւ տեսնելուց յետոյ. տուին ինձ օրինաւոր ստորագրութիւն հաշուետուութեան մասին.

Ըստ իմ կարծեաց Ս. Նշան եկեղեցւոյն մօտ 25 ամիս ծառայելուց յետոյ գրաբաւոր հրաժարական տուի եւ դուրս եկայ պաշտօնից.

Ս. Նշան եկեղեցու Երեցփոխ. Մ. ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս յ12 Յունուարի ընդ համարաւ 21՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան տղայոց ուսումնարանի Զրկինենց Ս. Կարապետ եկեղեցւոյ Հայոց Տփխիս քաղաքի՝ Բարեկրօն Ներսէս քահանայն Տէր Բարսեղեանց և պատուելիք՝ Յովսէփ Ստեփաննեան Անանեանց, Մովսէս Մարկոսեան Յարութիւնեանց և Գէորգ Լուարսաբեան Կուզանեանց.

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս յ12 Յունուարի ընդ համարաւ 22՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան տղայոց ուսումնարանի Կաթուղիկէ Ս. Գէորգ եկեղեցւոյ Հայոց Տփխիս քաղաքի՝ Բարեկրօն Գարեգին քահանայն Մատինեանց, Ստեփաննոս քահանայն Սամուէլեանց և պատուելիք՝ Կամսար Տէր Դաւթեանց և Քալանթար Քալանթարեանց.

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս յ12 Յունուարի ընդ համարաւ 23՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Արդուին քաղաքի, պատուելիք՝ Մկրտիչ Յակոբեան Վաթուլեանց, Անտոն Զօհրապեանց, Աբրահամ Գուրգինեանց և Մահտեսի Մկրտիչ Աղնաւուրեանց.

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 14 Յունուարի ընդ համարաւ 24՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան տղայոց ուսումնարանի Պետիգորսկ քաղաքի պատուելիք՝ Բաղդասար Էմմանուէլեան Խօջայեանց, Յովհաննէս Մարտիրոսեան Բաբասինեանց, Ղազարոս Ղուկասեան Սվեչնիկեանց, Դաւիթ Գաբրիէլեան Քիւրճեանց, Գէորգ Յովհաննիսեան Մանտաշեանց և Խաչիկ Կարապետեան Թամանեանց.

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 14 Յունուարի ընդ համարաւ 31՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական մի-